

Պետական մարմինների և նրա պաշտոնատար անձանց որոշումները կամ գործողությունները/անգործությունը/ վիճարկելու վարչական կարգը

Պետական մարմինների և նրա պաշտոնատար անձանց որոշումները կամ գործողությունները /անգործությունը/ վիճարկելու վարչական կարգը սահմանված է < Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով /այսուհետ՝ օրենք/: Օրենքի 69-74-րդ հոդվածները սահմանում են վարչական բողոք բերելու հիմքերը և կարգը:

Համաձայն օրենքի 69-րդ հոդվածի՝ < Անձինք իրենց իրավունքների պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ)>:

Բողոքարկման կարգը նախատեսված է օրենքի 70-րդ հոդվածով՝որի համաձայն.

<1. Ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

2. Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած՝

ա) վարչական մարմին.

բ) վարչական մարմնի վերադաս վարչական մարմին:

Եթե ակտը բողոքարկվել է ակտն ընդունած վարչական մարմին և (կամ) բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմին, ապա բողոքը ենթակա է քննարկման բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմնում: Այդ դեպքում բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնում բողոքի առնչությամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

3. Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է>:

Վարչական բողոք բերելու ժամկետների սահմանված են օրենքի 71-րդ հոդվածով՝ համաձայն որի.

<1. Վարչական բողոքը կարող է բերվել՝

ա) վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում.